

Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ղեկավար
տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ռազեյան



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՌԱՖԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՎՐՈՏԻԶՄԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ
(ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՌԱՖԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՎՐՈՏԻԶՄԻ ՍՈՑԻԱԼ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԻԳՐԱՑԻՈՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ (ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)» խորագրով
ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում (13.01.2026,
արձանագրություն N 1): Ամբիոնի նիստին մասնակցում էին հոգեբանության և
քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լ. Հ. Պետրոսյանը, ք.գ.դ.,
պրոֆեսոր Մ. Մարգարյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ա. Բ. Լոքյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ռ.
Վ. Աղուզումցյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, ք.գ.թ., դոցենտ Մ. Գ.
Մարգարյանը, ամբիոնի դասախոսներ Ա. Ղուշյանը, Լ. Գրիգորյանը, գործավար Ս.
Յ. Ավագյանը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից հասարակության գլոբալ քաղաքակրթական փոփոխությունների պայմաններում ի հայտ են գալիս երևույթներ, որոնք զգալիորեն ազդում են բնակչության հոգեկան առողջության վրա, դրսևորվում են ոչ միայն անհատական ներոտիկ նշաններով, այլև արտաքին միջավայրին հարմարվելու և սոցիալական կառուցվածքում ինքնադրսևորվելու ունակության խնդիրների միջոցով:

Ակներև է, որ հոգեբանական գիտությունն ավելի ու ավելի է հետաքրքրվում այնպիսի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ, որոնք ուղղված են սոցիալական ներոտիզմի դրդապատճառների բացահայտմանը, ինչպես նաև սոցիալ-միջավայրային գործոններով պայմանավորված արտաքին միջավայրին հարմարվելու ունակությունների, այդ թվում՝ տագնապայնության մակարդակի թուլացման, ապագայի հանդեպ սպասումների իմաստավորման, հույզերի կարգավորման և, ընդհանուր առմամբ, սոցիալական կառուցվածքի փոփոխվող պայմաններում ինքնադրսևորման վերհանմանը:

Ատենախոսը նշում է, որ հոգեբանության մեջ սոցիալական ներոտիզմի՝ որպես անկախ գործընթացի, դեստրուկտիվ զարգացումը քիչ է ուսումնասիրվել: Այն հարցը, թե ինչ ազդեցություն ունեն անբարենպաստ կամ չկարգավորված սոցիալական հարաբերությունները սոցիալական ներոտիզմի դեստրուկտիվ զարգացման վրա, լիովին լուսաբանված չէ:

Ելնելով հիմնախնդրի արդիականությունից՝ ատենախոսն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել սոցիալական ներոտիզմի երևույթը անբարենպաստ սոցիալ-միջավայրային պայմանների ու անձնական խոցելիությունների փոխկապվածության համատեքստում, մշակել սոցիալական ներոտիզմի բացասական ներուժի մարմանն ուղղված մեթոդաբանական ուղենիշներ (բռնագաղթած անձանց և սոցիալական խմբերի օրինակով):

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից:

Ատենախոսության ներածության մեջ առաջադրվել են վարկածը և ենթավարկածները, սահմանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նեկայացվել են պաշտպանությանը ներկայացվող դրույթները: Նշվել են հետազոտության մեթոդները և մեթոդիկաները:

Ատենախոսության առաջին «Սոցիալական ներոտիզմի տեսական բնորոշումների սոցիալ-հոգեբանական քննությունը» գլխում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում սոցիալական ներոտիզմի ֆենոմենի տեսական մեկնությունները, վերլուծվում են սոցիալական ներոտիզմի սոցիալ-հոգեբանական բնորոշումները: Առաջին՝ «Սոցիալական ներոտիզմի ֆենոմենի տեսական մեկնությունները» ենթագլխում ներկայացվում են Ձ. Ֆրոյդի, Ա. Ադլերի, Ֆ. Պերլսի, Կ. Հորնիի, Գ. Այզենկի, Ռ. Մեյի, այլոց տեսական մոտեցումները ներոտիզմի բնույթի և պատճառների վերաբերյալ, շեշտադրվում են որպես ներոտիզմի դրսևորման գործոններ անհատին սահմանափակող սոցիալական 7 պայմանները, նորմերը և կարծրատիպերը:

Երկրորդ՝ «Սոցիալական ներոտիզմի սոցիալ-հոգեբանական բնորոշումների վերլուծություն» ենթագլխում սոցիալական ներոտիզմի հասկացությունը ներկայացվում է որպես անձի որակական բնութագիր, որը դրսևորվում է ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակներում:

Ատենախոսության երկրորդ՝ «Սոցիալական ներոտիզմի հայեցակարգը իմիգրացիոն գործընթացներում» գլխում վերլուծության են ենթարկվում իմիգրացիոն գործընթացների հոգեբանական բնորոշումները և մեկնությունները: Ներկայացվում են Վ. Ի. Պերևեդենցևի, Ա. Բ. Բարիխինի գաղափարները միգրացիայի սահմանման վերաբերյալ:

«Իմիգրացիոն գործընթացներում սոցիալական ներոտիզմի գնահատման հայեցակարգը» վերտառությամբ երկրորդ ենթագլխում ներկայացվում են սոցիալական ներոտիզմի դեստրուկտիվ զարգացումը պայմանավորող թե՛ սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ տարբեր գործոնները: Վերլուծվում են իմիգրացիոն գործընթացների և նրանցում անձանց և սոցիալական խմբերի բռնի տեղահանության, բռնազաղթի և դրա սոցիալ-հոգեբանական հետևանքների վերաբերյալ տարբեր հեղինակների դիտարկումները, որոնք հանգեցնում են իմիգրացիոն գործընթացներում սոցիալական ներոտիզմի ֆենոմենի հայեցակարգային մոտեցմամբ մանրամասն ուսումնասիրելու գաղափարին:

Սոցիալական ներդրողի գնահատման հայեցակարգն իրենից ներկայացնում է փորձարարական հետազոտության մեթոդաբանական հիմքը, որի արդյունքները և վերլուծությունը տրվում են ատենախոսության երրորդ՝ **«Իմիգրացիոն գործընթացներում սոցիալական ներդրողի հայեցակարգային հատկանիշների փորձարարական հետազոտություն»** գլխում: Երրորդ գլխի առաջին՝ **«Փորձարարական հետազոտության մեթոդական հիմքերը և կազմակերպումը»** ենթագլխում ներկայացված են իրականացված հետազոտությունների կազմակերպման մեթոդական հիմքերը, փորձարարական հետազոտության ընտրանքն ու կիրառված մեթոդների հիմնավորումները: Հետազոտությունը ներկայացված է փուլերով: Այն առանձնանում է հետազոտության ընտրանքի ծավալով և հետազոտական շատ խմբերով:

Իրականացնելով մեծածավալ փորձարարական և տեսական ուսումնասիրություն՝ ատենախոսը հանգել է եզրակացությունների, ըստ որի հաստատել է առաջադրված վարկածը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 6 հրապարակումներում:

Սեղմագիրն ամբողջությամբ արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել որոշ դիտարկումներ, որոնք առավել մանրամասն պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես՝

1. Ատենախոսության փորձարարական մասում առանձնացված են հետազոտության համար բավական շատ մեթոդիկաներ, սակայն հիմնավորված չէ դրանց ընտրությունը, ինչը ցույց կտար դրանց կապը հեղինակի կողմից առաջադրված սոցիալական ներդրողի գնահատման հայեցակարգի գործոնների հետ:

2. Ատենախոսությունն առանձնանում է հետազոտության ընտրանքի մեծ ծավալով, սակայն տարիքային բաժանման հիմնավորումը բացակայում է, ըստ տարիքային շրջաբաժանման խմբերի առանձնացումը հնարավորություն կընձեռեր առավել շատ բացահայտել հոգեբանական առանձնահատկությունները:

3. Հետազոտության խնդիրներում գրված է «ներկայացնել գիտագործնական առաջարկներ՝ ուղղված սոցիալական նևորտիզմի բացասական ներուժի մարմանը», ինչը խնդիրների շարքում չի դասվում:

4. Ատենախոսության առաջին եզրակացությունն ունի առավել շատ նկարագրական բնույթ, որտեղ թվարկվում են ուսումնասիրվող երևույթի սոցիալական բաղադրիչները: Վերջին եզրակացությունը ձևակերպված է որպես առաջարկ:

Հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության ծավալը, կիրառական նշանակությունը՝ **ՌԱՖԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՎՐՈՏԻԶՄԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ (ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ) » ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն»** մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համարել համապատասխան ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ կարևոր խնդրի լուծում, իսկ **ՌԱՖԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ** արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ պետական կառավարման
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Նիստի քարտուղար՝



Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Լ. Պետրոսյան